ՏԵՂԵԿԱՆՔ

ԱՀ-ում 2022թ. դեկտեմբերի երրորդ տասնօրյակում դիտված օդերևութաբանական պայմանների վերաբերյալ

Դեկտեմբերի 21-ին և 29-ին առանձին շրջաններում դիտվել են թույլ տեղումներ: Տեղումների գումարային առավելագույն քանակը դիտակետերում կազմել է 1 մմ:

Օդի միջին տասնօրյակային ջերմաստիճանը Ստեփանակերտում եղել է +2.0^{0}C, նորմայից բարձր 1.1^{0}C-ով, Ասկերանում՝ +2.7^{0}C, Մարտունիում՝ +3.3^{0}C նորմայից բարձր 1.0^{0}C-ով և Մարտակերտում՝ +4.8^{0}C:

Ամենաբարձր ջերմաստիճանը դիտվել է դեկտեմբերի 28-29-ին՝ +10…+14^{0}C:

Ամենացածր ջերմաստիճանը դիտվել է դեկտեմբերի 22-ին և 30-31-ին ՝ -2… -4^{0}C:

Հողի մակերևույթի նվազագույն ջերմաստիճանը իջել է մինչև -1…. -2^{0}C, առավելագույնը բարձրացել մինչև՝ +11….+13^{0}C:

Դեկտեմբերի երրորդ տասնօրյակում քամու միջին արագությունը հասել է 1-3 մ/վրկ, պոռթկումները մինչև՝ 8-9 մ/վրկ արագությամբ:

Օդի միջին տասնօրյակային հարաբերական խոնավությունը կազմել է 74-80%:

ԱՀ-ում 2022թ. դեկտեմբեր ամսում դիտված օդերևութաբանական պայմանների վերաբերյալ

Դեկտեմբեր ամսում շրջանների զգալի մասում դիտվել է քիչ տեղումներով, նորմայից ցածր ջերմաստիճանով եղանակ, բացի Մարտակերտից:

Տեղումների ամսվա գումարային քանակը կազմել է Ստեփանակերտում՝ 10մմ, նորմայի 56%, Ասկերանում՝ 18մմ, նորմայի 95%, Մարտունիում՝ 18 մմ, նորմայի 67%, Մարտակերտում՝ 19մմ, նորմայի 136%, կամ Ստեփանակերտում 100%, Մարտակերտում 146%, Ասկերանում 225% և Մարտունիում 257% քան 2021թ-ին:

Օդի միջին ամսական ջերմաստիճանը կազմել է Ստեփանակերտում՝+2.1^{0}C, որը ցածր է նորմայից 0.9^{0}C-ով, Ասկերանում՝ +2.7^{0}C, նորմայից ցածր՝ 1.0^{0}C-ով, Մարտունիում՝ +3.3^{0}C, նորմայից ցածր՝ 0.4^{0}C-ով, Մարտակերտում՝ +4.5^{0}C, նորմայից բարձր՝ 0.7^{0}C-ով, կամ 3-4^{0}C–ով ցածր քան 2021թ-ին:

Օդի ամենաբարձր ջերմաստիճանը հանրապետության տարածքում դիտվել է դեկտեմբերի 14-ին՝ +15… +18^{0}C :

Օդի ամենացածր ջերմաստիճանը դիտվել է դեկտեմբերի 12, 19, 22, 30-31-ին՝ -2… -4 ^{0}C:

Հողի մակերևույթի նվազագույն ջերմաստիճանը իջել է մինչև -1… -4^{0}C, առավելագույնը բարձրացել է մինչև՝ +13….+18^{0}C:

Դեկտեմբեր ամսվա քամու միջին արագությունը կազմել է 1-2 մ/վրկ, առանձին օրեր դիտվել է քամու ուժգնացում պոռթկումները մինչև՝ 9-12 մ/վրկ արագությամբ:

Ստեփանակերտում դեկտեմբերի 4-6-ին և 21-ին ձյան ծածկի բարձրությունը առավոտյան 07:00-ի դրությամբ կազմել է 1 սմ, իսկ Մարտակերտում դեկտեմբերի 6-ին՝ 1 սմ:

Ստեփանակերտում, Ասկերանում և Մարտունիում դեկտեմբեր ամսում օդի միջին հարաբերական խոնավությունը կազմել է 80-86%, նորման Ստեփանակերտում՝ 71%: